

միջոցը պիտի ըլլային, և անտարակոյս այս բանն է առաւելապէս որ վերջնական համաձայնութիւնը գոյացնելու ծառայեց: Ձեր ս. Օծութիւնը թոյլ պիտի տայ ինծի յիշատակելու նաև, և մասնաւորապէս, մեր բանակցութեանց յաջողութեան նպաստող ազդակներուն մէջէն, այն կատարեալ միութիւնը որուն ապացոյցը տուին շարունակ ամեն երկիրների Հայերը, այն օրէն սկսեալ, որ Ձերդ Վեհափառութիւնը ստանձնեց նախաձեռնութիւնը պետութեանց ներկայացնելու իր ժողովրդին արդար պահանջները: Ձերդ ս. Օծութիւնը փափաք յայտնած է որ, պէտք եղած ատեն, շարունակիմ աշխատիլ իր ներկայացուցիչը հայաբնակ նահանգներու մէջ բարենորոգումներու կատարեալ յաջողութեան համար:

Վստահութեան այս նոր արտայայտութեան հանդէպ ջերմապէս զգացուած եմ, և թէպէտ որոշած էի, առաջին պաշտօնս լրանալուն, եպիպոսոսի մէջ հանգիստ առնել, մանաւանդ որ մեծ պէտք ունիմ, բայց կապահովցնեմ Ձեր Վեհափառութիւնը թէ իմ օժանդակութիւնս երբեք պիտի չի խնայիմ, և թէ անմիջապէս որ եւրոպա վերադառնամ, դէպի յունիսի կիսուն, ինքզինքս սիրայօժար պիտի տրամադրիմ Ձեր Վեհափառութեան կատարելու համար ու ե պաշտօն, զոր օգտակար պիտի համարիք վստահիլ ինձի:

Կը խնդրեմ Ձեր Վեհափառութենէն որ, իմ անխախտ երախտագիտութեանս հետ բարեհաճիք ընդունիլ իմ խորապէս անձնուէր և յարգալից զգացումներուս նորոգ հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Քրդական շարժումն.

Տարօնի Հայոց առաջնորդարանը իւր 22 ապրիլի ներկայ 1914 թ. դրութեամբ Մուշից գրում է Նորին Ս. Օծութեան Վեհափառ Կաթողիկոսին հետևեալը.

Վեհափառ Տէր,

Ձեր Վեհափառութեան 10/4—914 թ. հեռագիրը ստա-

նախով՝ հեռագրաւ պատասխանեցինք հետեւեալ խմաստովը «Պիթիիսի քրդական բեաքսիոնը ուղղուած է Կառավարութեան դէմ, ներկայիւս հայերուն վտանգ չկայ, շարունակութիւնը կասկածելի է»:

Բաղէշի դէպքերի մասին տեղեկագիրը մ'ալ ամսոյս 9 թուով ղրկեցինք: Այս անգամ ալ ստացանք Հայրապետական դիւանի 31 մարտի 466 թիւ գրութիւնը, որով Ձերդ Վեհափառութեան հրամանը կը հաղորդէ մեզ «այսուհետեւ պարբերաբար տեղեկութիւններ հաղորդել հայերի և ընդհանրապէս մեր շրջանի կացութեան, դէպի հայերը կառավարական պաշտօնեաների և քրդերի վերաբերմունքի մասին և եթէ արտակարգ դէպքեր կամ երևոյթներ տեղի ունենան, անմիջապէս հեռագրով տեղեկացնել Ձերդ Վեհափառութեան»:

Պատուական Հայրապետիդ հոգացութիւնը, զոր ցոյց կուտաք հանդէպ Ձեր տառապեալ հօտին, մանաւանդ դէպի Հայաստանի այս գաւառներու դժբախտ ու շարժարուած հայութիւնը խորին երախտագիտութեան զգացմամբ կը լինցնէ մեր սիրտը և կը փութանք մեր շնորհակալութիւնը և մեր երախտագիտութիւնը յայտնել Ձեր Վեհափառութեան խոստանալով պարբերաբար հաղորդել Ձեզ մեր շրջանի հայերու կացութեան մասին. դժբախտաբար այստեղի հեռագրատունը ֆրանսերէն հեռագիր չնդունիր, անոր համար մենք կը պարտաւորինք մեր հեռագիրները փոստով Կարին կամ Բաղէշ ղրկել ինչպէս վերոյիշեալ հեռագիրը ղրկած էինք:

Բաղէշի կողմի քրդական շարժման և Բաղէշի վրայ յարձակման լուրերը 9 ապրիլ թիւ նամակովս հաղորդեր էի Ձեր Վեհառութեան, անկէ ատէն քրդական շարժումը առ այժմ իր կարևորութիւնը կորանցուցած կերևի, թէ և անոնց և զօրաց միջին ընդհարումներ կը պատահին, Բաղէշի մէջ պատերազմական ատեան մը կազմուած և ձերբակալուած քիւրդերը դատաստանի ենթարկուած են, յայտնի Շէխ Զալէատինի որդին և յաջորդ Սէյտ Ալին, ասոր որդին, հօրեղբայրը և ասոնց պարագաներէն մի քանի կարևոր բնութիւններ:

Քրդական շարժումը քանի մը տարի է, որ կը մշակուէր, կեզըրն ունենալով Խիզանը և Սղերաը, որոնց գլխավոր ղեկավարը եղած է Պատրիսան Բէկ զատէ Ապտիւլըրզան և իր եղբայրներն. հաւանականաբար անոնց բուն նպատակը քրդական ինքնօրինութեան շուրջը կը դառնայ, բայց ազէտ և մոլեռանդ շէյխները իրենց հետ միացնելու համար Էլէրիաթի անունով կը խօսին և կը գրգռեն քիւրդ հասարակութիւնը հարկերու բարձրացումը, Հայկական բարենորոգումները, կառավարական պաշտօնէից քիւրդերու վրայ ի գործ դրած բռնութիւնները ևս քրդական շարժման պատճառներու մէջն են: Եթէ այս շարժումը շուտով չզրկուէր, այս կողմերու քիւրդերը շուտով իրենց զազանային բնագոյներուն հետեւելով հայերու վրայ պիտի յարձակէին կեղեքելու և կոտորելու:

Գաւառիս մէջ քիւրդերու կողմէ ամենէն շատ կը նեղուին Սասունի, Մօտկանի և Խոյթի հայերը: Մօտկանի մասին մասնաւոր տեղեկագիր մը գոր մեր կողմէն հոն զրկուած ուսուցիչը յուզարկած է մեզ, կը ներկայանամ տեղեկութիւն:

Խոյթի հայերու վիճակը աւելի ևս անտանելի է երեսաց Պալաքցի աշխրէթներու, անցեալ տարի տեղւոյն կառավարական պաշտօնեան հայերու հացահատիկները բռնութեամբ քաշելով տուաւ քիւրդերուն, հայերը մատնուեցան ամենաթշուառ վիճակի մը. բարեգործական միութիւնը այս տարի օգնութեան ձեռք երկնցուցած է այդ խեղճերուն իբր 200 ոսկիի նպաստ մը տալով. սակայն քանի մը անգամէ որ խումբ խումբ կիներ ու այլ մարդիկ աստ աստ շարդարանս զիմելով կը բողբեն Պալաքցի քիւրդերու բռնութիւններու դէմ, որոնք չեն թողար զիրենք ազատ համարձակ դաշտ ելնել, տաւարներ, ոչխարներ արածացնելու տանել, լուծք ընել, իրենց հողերը միացած են անմշակ, ափ մը սերմ գետին ձգած չեն. քիւրդերը կը պահանջեն, որ հայերը մուրհակ տան հողերու արգիւնքի կէսը իրենց տալու, ապա թէ ոչ չպիտի թողուն արօրը գետին զարնելու, մեք հեռագրով և նամակով Բաղէշի կուսակալին

գիմեցինք. բայց նա մեր տուած տեղեկութիւնները իբր անհիմն մերժեց հիմնուելով Մօսկանի Գայմագամի տուած ապահովիչ տեղեկութիւններու վրայ:

Սոյթի Միւտիրի փոխանորդ Մէհմէտ էֆէնտին անցած ձմեռը փետրուարի ամսին իր ընակարանի մէջ սպանուած դանուելով, հայերուն վերագրեցին այդ ոճիրը. Շնիտտ գիւղի հայերէն 17 անձինք ձերբակալուած՝ Բաղէշ տարած բանտարկած են. այդ գէպքի հետեանքով Սոյթի, մասնաւորապէս Շնիտտ, Թաղավանք և Լորտօձոր գիւղերու աղքատ հայերու զէմ աննկարագրելի բռնութիւններ գործ գրուած է, յիշեալ գիւղերը պաշարուած վիճակի մը մէջ են ցարդ, այստեղ կրցած են գալ միմիայն զինուորներու ընկերակցութեամբ. Սոյթի մէջ գոռնտ մը գօրք կայ և ժանդարմաներ կան թէ և բայց անոնք քիւրդերու բռնութիւններ արդելելու համար գործնական ոչինչ կ'ընեն. ամեն օր քիւրդերը ժանտարմաներու և զինուորներու հետ շփում ունեն, ընտանեցած են անոնց, քիւրդերու մէկ սպանալիքը բաւական է հայերը իրենց աշխատանքէն ետ կասեցնել. և զինուորական օֆիցեր և միւտիրը հայերուն կը ստիպեն, որ քիւրդերուն գոհացում տան, այսինքն իրենց հողերը քիւրդերուն թողուն և իրենք վարուեն իբր վարձկաններ: Բաղէշի Կառավարութիւնը ցարդ հայերու իրաւունքը պաշտպանելու համար բան մը չէ ըրած և քրդական ըմբոստութիւններ ծագելէ վերջն ալ զանոնք հովանաւորելու ընթացքէն ետ կեցած չէ: Սոյթեցի հայերէն մի քանի հոգի այս օրերս այս տեղէն Բաղէշ գնացին Կուսակալէն քիւրդերու զէմ պաշտպանութիւն խնդրելու համար:

Սասունի մէջ քիւրդերը կը շարունակեն հայերէն առնել խաճիփոթիւն անունով բռնաւորական տուրքը. հոն տեղ հայը՝ իր ընտանիքով, իր կալուածներով քուրդ աղայի իշխանութեան ներքին է, աղայի ամէն ուղածը պարտական է կատարել, բացի զանազան տուրքերէ, պարտական է աղայի արտը, խոտը հնձել, ոչխարի համար տերեւ կտրել և վերջապէս ամէն ծառայութիւնը ընել. այդ քիւրդերը տէրութեան տուրք և զինուոր չեն տար, իսկ հայը երկուց

տերանց կը ծառայէ, թէ պետութեան և թէ քիւրդ աղային այսպէս է նաև Մօսկանի և Խոյթի հայերու վիճակն ալ:

Պուլանխի մէջ Լաթար գիւղի հայ և քիւրդ երկրագործ ժողովրդեան սեպհական հողերը գիւղի մէջ բնակող Շէյխները իբրև տէրը անոնց ձեռքէն խելով կուտան գիւղում հաւաքուած աւազակ քիւրդերուն, Վարի Պուլանխի, Ապրի, Մուսքեանդ, Գեապօլան և Կոզակ գիւղերու մէջ ալ բազմաթիւ շէյխեր բնակած լինելով հայերու կեանքը անտանելի դարձուցած են, իսկական գերիներ են, ոչ իրենց սեպհականութեան տէր են և ոչ պատուոյն. քանի քանի կիներ, աղջիկներ այս գիւղերու մէջ շէյխերու սրիկայ որդիները և ծառաները առեւանգած և կրօնափոխ ըրած են, շատերու սեպհական արտեր ու մարդեր յափշտակած, իրենք զիրենք շրջապատած են գողերով և աւազակներով. որոնք սոսկալի պատիժներ են հայերու համար: Միւս կողմէն Կառավարութիւնը բռնութեան շրջանին շատ մը գիւղացիներու հողերը բռնի անոնց ձեռքէն առնելով, անոնց վրայ հաստատած է, Կովկասէն և Րումէլիէն եկած գաղթականները, որոնք աւազակաբարոյ մարդիկ ըլլալով իրենց գողութիւններով ալ կը նեղեն հայերը: Գիւղացի ժողովրդեան ամենամեծ պատիժն ալ եղած է և է ոստիկան գինուորներ (ժանդարմա) որոնք իրենց պաշտօնը ի գործ կը դնեն տանջելով, չարչարելով, հարստահարելով և կեղեքելով, իրենց և ձիերու բոլոր պէտքերը ձրի կառնեն, անոնց դէմ մեր ժողովրդեան բոլոր գանգատները ցարդ ապարդիւն մնացած է և ասոնք կը շարունակեն իրենց այդ ապօրինի ընթացքը:

Իսկ Կառավարական պաշտօնեաներու տրամադրութիւնը դէպի հայերը երբէք փոխուած չէ, կը պատահեն պաշտօնեաներ, որոնք այսպէս ասած քիչ մը ձկուն են կեղծել, խարել, շողոքորդել գիտեն, ինքզինքնին կը չքմեղեն ստորագասեալ պաշտօնեաներուն և քիւրդերուն տգիտութեանը վերագրելով, բայց զանոնք կը թելու, օրինաց հաւանդեցնելու համար ոչինչ կրնեն: Հին թուրք մօլեռանդ և բարբարոս, Նոր թուրքը ազգայնամոլ կեղծ ու նենգաւոր, ու աւելի վտանգաւոր: Աստուած իր ժողովուրդը այս գայ-

լերէն և աղուէսներէն ազատէ Ձեր սրբանուէր աղօթքով:
Համբուրիւ Ս. Աջոյգ ֆամ խոնարհ որդի ընդհ.
վանհ. առաջն. Տարօնոյ ն. եպս. Խաղախանեան.

Երկրորդ գրութեամբ նոյն թուով գեր. Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանը շրջակայ ժողովրդի գրութեան մասին հետեւեալն է գրում.

«Յաւոց ու հեծեծանաց աւելի խորունկ ու սրտառուչ արձականք մ'ալ Մօտկանէն կուգայ. այս գաւառները Խոյթին կից է թէև, բայց Մուշէն 12—15 ժամ հեռաւորութիւն ունի. Բաղէշէն միայն 3—4 ժամէ, Բաղէշի առաջնորդարանը անոր չի նայեր, անոր համար որ Ս. Աղբերիկի թեմն է եղեր, հետեւապէս Մշոյ առաջնորդութեան կը պատկանի, սակայն Մօտկանը չի կրնար Մշոյ առաջնորդարանի հետ յարաբերութիւն պահել, ճանապարհները դէպի այս կողմ գրեթէ անանցանելի են և գաւառակը Բաղէշի հետ կապուած է:

Իւնիօնի ապահովագրական քննիչներէն Կարապետ էֆ. Իսրապեան բարեսրտութիւն ունեցաւ Մօտկանի Գգեխ գիւղի մէջ վարժարան մը բանալու համար նպաստ մը տալ, ուսուցիչը մենք զրկեցինք պ. Բենիամին Հլղաթեան, որ իր առաջին տեղեկագիրը յունուար 16 թուով հասցուց մեզ, որմէ ի տեղեկութիւն Ձեզ կը հաղորդեմ:

«Մօտաւորապէս երկու ամիս է, որ Մօտկանի Գգեխ գաւառը եկած եմ, կսէ պ. Բենիամին, ինչպէս գիտէք ուսուցչական պաշտօնով, բայց այս ժողովրդի անտանելի դժբախտ կացութիւնը չի թողուր լուռ հանդիսատես ըլլալ և շուրջիներս չտեսներ:

Գգեխի գիւղախումբը իբր 20 հայաբնակ գիւղերէ կը բաղկանայ որ շրջապատուած է գաղանաւարոյ, վայրենի քրդաբնակ գիւղերով, այս գաւառը դարերու ընթացքում Ս. Աղբերիկի վարքին թեմն ըլլալով՝ Բաղէշի առաջնորդարանն բնաւ անոնցմով հետաքրքրուած չէ ոչ անոնց կրօնականին հոգ տարած է, ոչ տնտեսականին և ոչ ալ քաղաքական վիճակին. թէև քանիցս զիմուսներ ալ եղած է

իրենց դարսերու և ցաւերու համար, սակայն մերժուած են, իսկ հետաւորութիւնը անհնարին կրնէ խեղճերուն Մուշ գալ և իրենց դարդին դարման մը գտնել:

Այդ երկու տասնեակ զիւղերը տնտեսապէս շատ թըռուաւ են, իրենց ուտելիքն է կոբեկ և գրկիլ. ցորենի հաց շատ հազուագիւտ է, անկողին ըսուած բան այդ հեզ ժողովրդի մէջ գոյութիւն չունի, բոլորն ալ կիսամերկ են, իրենց բոլոր աշխատանքը քիւրդ ազաններ կը յափշտակեն, բացի գողութեամբ, աւազակութեամբ տարածներէն, քիւրդերը քանի մը տեսակ տուրք կ'առնեն, որոց զլիսաւորն է խափիւրօքիւնը. միւս կողմէն Կառավարութիւնը առանց մագի մը չափ անոնց պաշտպանութիւն ընելու իր տուրքերով կը ծանրանայ այդ դժբախտներուն վրայ: Միւլթէ-զիմներու շահատակութիւնները աննկարագրելի են. վերջապէս այդ խեղճ հայերը գարունէն մինչև աշուն կաշխատեն միմիայն կշտացնելու համար գազանաբարոյ մարդասպաններ, որ միշտ կը սպառնան զանոնք բնաջինջ ընել:

Այս տարի ամեն ցաւերու վրայ աւելցաւ անասնոց ժանտախտն ալ, որ անխնայ կը կոտորէ, ոչ բժիշկ կայ և ոչ առողջապահական հոգացողութիւն, ոչ լծկան եզ մնաց և ոչ կթան կով ու ոչխար: Առաջիկայ գարնան ոչ լծկան եզ ունեն և ոչ կթելու կով ու ոչխար. ի՞նչ պիտի ըլլայ այս խեղճ ժողովրդեան վիճակ, Տէր իմ Աստուած:

Մնունդի պակասութեան և մերկութեան պատճառով հարսանէթի հիւանդութիւնը խեղճ մանուկները կը կոտորէ. քեկտեմբերի սկզբէն մինչև հիմայ (յունի. 16) 50 մանուկ մեռած են 1—12 տարեկան. թիֆօն ալ մէջերնէն անպակաս է զոր իրենք ռուս կանուանեն, դեղի, բժշկի վրայ գազափար չունեն: Բաղէշէն քիչ մը դեղեր հետս բերած էի, բոլորը ցրուեցի և հիմայ շուարած եմ ինձ ալ տկարութիւն մը պատահի ի՞նչ ընեմ:

Այս տարաբախտ շրջանի հայոց հոգերու բռնադրաւորներու մէջ իր անգթութեամբը և բարբարոսութեամբը նշանաւոր է Շէյխ Հաճի Իբրահիմի որդին շէյխ Զէյնէդլին որ գրաւած է Մէսէ քաղը գիւղի կալուածները, առանց

գլին վճարելու, հիմայ այդ գիւղի 34 արտերուն տիրելէն դատ տիրած է բոլոր անասուններուն, արօտատեղիներուն և ջրագացքի մը, դեռ կը սպառնայ ուրիշ կալուածներու ալ տիրել, գրաւուած կայուածքներու տուրքերը աղքատ հայերը կը վճարեն, իսկ ինքը կը տանէ բոլոր բերքերը, ամէն տարի գիւղի տասանորդ ինք կը վերցնէ, ամբողջ տասանորդի գինը գիւղացիներէն գանձելէն վերջ կը սկսի չափել անոնց կալերը և տասանորդը իրեն կը սեպհակահանցնէ:

Այս շրջանն ալ կալուածական բռնագրաւումներ շատ կան քիւրդ աղաների, շեխերի և Բաղէշ քաղաքի էշրաֆների կողմից, որոց մանրամասն տեղեկագրութիւնը կը ջանատ վերջէն գրկել:

Կառավարութիւնը այս գաւառակի մէջ իւր գոյութիւնը միայն հարկահանութեան առթիւ ցոյց կուտայ Գայմազամը Դատուան անունով քրդաբնակ գիւղը կը նստի, հարիւրապետ Ազիզ էֆ, թէ Գայմազամ է և թէ ժանդարմայի գամանդան, դատարան մ'ալ կայ, նախագահը նոր եկաւ, դատարանի մէջ մէկ քիւրդ և մէկ հայ անդամ կայ, որ առանց ժողովրդի ընդունութեան կարգուած են, գրեթէ կարդալէ օրէնքէ ոչինչ չեն հասկնար:

Մօտկանի հայ գիւղերը քանի մը տասնեակ տարիներ առաջ բազմամարդ եղած են, բայց անտանելի հարստահարութեան երեսէն զաղթած, ցրուած, մասմն ալ ջարդուած ու մեռած են, առաջիկայ դարնան շատերը նորէն պիտի դաղթէն և Գոբեխու միմիայն հայաբնակ գիւղախումբը պիտի մնայ բոլորովին թափուր:

Առանց վհատելու ես կը շարունակեմ իմ պաշտօնս, տոկալով ամեն տեսակ նեղութեանց տառապանքներու, գրեթէ անօթի, ծարաւ օր կանցուցանեմ, ուտելիք գտնելու և գնելու հնարաւորութիւն չկայ, վստահ եղէք ո. Հայր 15 ոսկին, որ ինձի վարձք որոշած էիք գրեթէ առածիս կէսը ծախսած եմ խեղճ ժողովրդեան, ղեղերու և այլ և այլ պէտքերու երբ կը տեսնեմ, որ դժբախտ ժողովուրդ զուր տեղ կը մեռնի:

Ս. Հայր, կը խնդրեմ դուք ժամ առաջ դիմէք Ազգային Պատրիարքարանը և Հ. Բ. Ը. Միութեան և խնդրել, որ փոքր նպաստ մը փութացնեն առաջիկայ զարնան լծկան եզ և սերմնացան առնուի, բաշխուի: Այս դաւառը մինչև ցարդ ոչ մի տեղէ նպաստ ընդունած չէ, ոչ որ անոնց վիճակով հետաքրքրուած է:

«Այս շրջանի կրօնական վիճակն ալ անմխիթար է, պէտք եղած չափ և իրենց կոչման արժանի քահանաներ չկան. ամբողջ այս թեմի մէջ չորս քահանայ կայ, որոնց երկուքը պարզ գրել կարգալ չեն գիտեր, մեկն ալ զազամած, երկու աչքերէ զրկուած ծերունի մն է, միայն մի քահանայ կայ բաւական գիտակից, զարդացած չափով մը, բայց չափազանց աղքատ ու թշուառ, ոչ ուտելու հաց ունի, ոչ կանոնաւոր հագուստ և ոչ անկողին, թէև ութ գիւղ կը հովուէ, որոնք իրմէ աւելի աղքատ ու թշուառ են:

Մօտկան ունի շատ մը սրբավայրեր, վանքեր ու եկեղեցիներ, դայց մասամբ կիսաւեր վիճակի մէջ, քրդարնակ գիւղերու մէջ ալ եկեղեցիներու և վանքերու տւերակներ կան, Գեղդ ունի չէն վանք մը և Կիրակոս անունով, որ միաբանութիւն չունի:

Դպրոց բնաւ ունեցած չէ այս շրջանը, Բաղէշի մէտրիքի կողմէն դպրոց մը բացուած է Նուակ գիւղը և ուսուցիչ մը զրկուած է 150 դրշ. ամսականով, որ բան մը չը գիտէր. գիւղացիներն ալ արգէն գոհ չեն իրմէն: Միւս դպրոցն ալ մեր ըացածն է, ուր միայն 12 աշակերտ ունինք, բայց բախտը մեզի չխնդար, զրեթէ բոլոր մանուկներ ուտողաբ հարսանիկէ բռնուած և մեր աշակերտներէն չորսը վարակուած են: Այս շրջանի ժողովուրդը ուսման համը առաջ չեն և դպրոցին կարեւորութիւն չեն տար: Սիրտո չաանիր, չեմ կրնար գիմանալ, իրենք կուլան, ես ալ կը ստիպուեմ իրենց հետ լալու:»

Բաղէշի առաջնորդ Տ. Սուրէն վարդապետն իւր 17 ապրիլի 1814 թ. գրութեամբ հաղորդում է Դիւանապետ Տ. Բագրատ եպիսկոպոսին հետեւեալը.

Գեր. Սրբազան Հայր,

Ստացանք Ձեր Սրբազնութեան մարտ 31 թուակիր և 467 թուահամար գրութիւնը, որով քրդական շարժումների հետեանքով վիճակիս մէջ տեղի ունեցած դէպքերու և մերայնոց կացութեան նկատմամբ տեղեկութիւններ պահանջած էիք:

Այդ առթիւ Դիւանիդ հեռագրին հարկ եղած պատասխանը հեռագրաւ տալէն վերջ մարտ 31 թուակիր և 29 թուահամար ընդարձակ տեղեկագրով մը պատահած տխուր իրադարձութիւնները հաղորդած եմք Վեհափառ Հայրապետին: Անշուշտ մեր նոյն տեղեկագիրը ցարդ ստացուած ըլլալու է:

Յետ այնու զանազան տեղերէ քաղաքս ժամանող զինուորական ոյժին և Կառավարութեան ձեռք առած միջոցներու վրայ ապահովութիւնը հետզհետէ վերահաստատուեցաւ: Քիւրդ խուժանը հակառակ իր մեծ յանդգնութեան, որով համարձակութիւն ունեցան քաղաքիս վրայ յարձակելու և Կառավարութեան՝ այնքան զոհողութիւններ ընել տալու, երբ պարտուելով ետ դարձան, իսկ ցիրուցան լինելով ամէն ոք իր օձիքն ազատելու ետէէ եղաւ: Ապստամբ քիւրդերու կեզրոն եղող վիճակիս Խիզան գաւառը ստուար թուով զօրք զրկուեցաւ քաղաքէս և Վանէն: Դէպքին մասնակցող և շարժումը յառաջ բերող քիւրդերը խստիւ կը հետապնդուին Կառավարութեան կողմէ:

Երկու շաբաթէ ի վեր արդէն պատերազմ. ատեան կազմուելով քաղաքիս մէջ, կանոնաւորաբար սկսած է շարունակել իր նիստերը՝ չափազանց գաղտնի կերպով, այնպէս որ խռովարարներու նկատմամբ արձակուելու վճիռներու մասին դեռ չենք կրցած որոշ տեղեկութիւններ իմանալ: Յարկ 200 է աւելի քիւրդեր ձերբակալուած և պատերազմական ատեանին յանձնուած են:

Ձերբակալուած խռովարարներու մէջ կը գտնուին խիզանի տխրահամբաւ և հայակեր Շէյխ Սէիդ-Ալին (արժանաւոր որդին և ժառանգ պատմական Շէյխ Ճէլալէտտինի), որ իրեն արբանեակ ունենալով հարեան գիւղերէն Փագի Սալիլ, Ատէի որդի Սուրշիտ և այլ ազգեցիկ քիւրդեր ու աւատապետներ, կատարեալ տէր դարձած է խիզանի և շրջակայ գաւառներուն, յաւիտենական պատուհաս մը դառնալով հայ ժողովրդեան գլխուն: Այս անգութ ճիւղի մասին Սահմանադրութեան հռչակումեն ի վեր հայերու բարձած բողոքները անլսելի մնացին Կառավարութեան կողմէ, և նա ամէն միջոց ի գործ դնելով հետգհետէ բողոքարկու հայերը մի առ մի սպաննել տուաւ: Սէիտ Ալիի չափ անգութ և վայրագ հրէշներ են նոյնպէս յիշեալ Փագի Սալիլ և Սուրշին, որոնք ևս ձերբակալուած են այժմ:

Մակայն ս. Հայր, ամբողջ Թուրքիա և մասնաւորապէս Պիթլիսի միջնորդին տակ անկարելի բան չկայ բնաւ: Սէիդ Ալիին և իրեններուն միջոց չի պակսիր իրենց ըրածը քողարկելու և քիչ ժամանակ վերջ սրբուած ու մաքրուած պատերազմական ատենանի բովէն դուրս գալու. ինչ որ աննախընթաց բան մը չէ, հարիւրաւոր հայերու արիւնը խմող, ապստամբութեան հեղինակ և հայուն յաւիտենական պատուհաս եղող մարդակեր Սէիդ Ալին, եթէ այս անգամ ալ յաջողէ պատերազմական ատենեն իր օձիքը ազատել, ինչ որ հաւանական կը թուի, մասնաւորապէս խիզանի հայութեան հոժ գանգուածը այլ ևս չպիտի կարենայ պահել իր գոյութիւնը:

Քրդական շարժման հետեանքով Կառավարութեան այսքան վարկաբեկուելու, գորաշարժութեան համար այսքան ծախսերու ենթարկուելը և այս երկու իրողութեան երեւոյն ժողովրդին կրած տնտեսական և բարոյական տաղանապը վախնանք, որ այս ամբողջ գոհողութեանց արդիւնքը պարզապէս շպար մը ըլլայ:

Քանի մը օր առաջ, երբ պատերազմական ատենանի նախագահ Իհսան փաշա առաջնորդարանս փոխադարձ այցելութեան եկած միջոցին, ինչպէս անկից առաջ, այս ան-

գամ ևս ինչ որ պէտք էր խօսեցանք ապստամբութեան պարագլուխներու վրայ և Սէիտ Ալիի վրայ մասնաւորապէս մի առ մի թուեցինք այս վերջնոյն գործած չարիքները և անհամար սպանութիւնները: Բացայայտ կերպով ըսինք թէ, եթէ Կառավարութիւնը կը փափաքի որ այս կողմի հայ ու իսլամ տարրերը խաղաղութեամբ ապրեն, պէտք է կախաղանին վրայ ճօճայ այդ ճիւղը: Նախագահ թէ և մեր ըսածները հաստատելով, հաւանութիւն և տրամադրութիւն յայտնեց եղած առաջարկներուն, սակայն մենք չենք կրնար լիովին համոզում գոյացնել:

Սէիտ Ալիի և կարգ մը վտանգաւոր ու ազդեցիկ աւատապետներու չարագործութեանց համապատասխան չարիք մը դրուելու մասին Ազգ. Պատրիարքարան մեր պարբերաբար դրկած տեղեկագրերով և Պատրիարք Հօր ուշադրութիւնը հրաւիրած ենք շարունակ և խնդրած ենք այդ առթիւ հարկ եղած ազդու միջոցները ձեռք առնելու:

Քրդական շարժման ամենագլխաւոր ղեկավարներէն Խիզանի Շէյխ Շէհապետին քանի մօր առաջ իր եղբօրը և ուրիշ հինգ գործակիցներու հետ ոռոսական սահմանագլխու մօտերը Կառավարութեան կողմէ ձերբակալուած և դէպի քաղաքս ճամբայ հանուած է: Քաղաքիս դէպքէն առաջ վերջնադրով մը քրդական պահանջները Կառավարութեան ներկայացնող անոնց գործադրութիւն պահանջողը և այլապէս քաղաքին վրայ յարձակուելու և զայն գրաւելու որոշումն բացէ ի բաց յայտարարողը յիշեալ Շէյխ Շէհապետին էր, որ քիւրդերու պարտուելը և անոնց դատաւիք լինել տեսնելով, իր օձիքը ազատելու համար ստիպած է եղբւր ուղղակի Ռուսաստանի ճամբան ձեռք առնել, սակայն չյաջողեցաւ իր նպատակին հասնել:

Յարդ չձերբակալուած խռովարարներէն ամենէն վտանգաւորը Երուն գաւառի Մէհմէտ Էմին և իր եղբայրը Ահմետ խան ֆնացած են, որոնք շաբաթ մը առաջ նոյն գաւառի մէջ ընդհարում մը ունեցան վերստին Կառավարական զօրքերու հետ, որոնցմէ երեք հոգի սպաննելէ և մէկը վիրաւորելէ վերջ կը յաջողին խոյս տալ. եթէ այս երկու եղ-

բայրներն ալ ձերբակալուին, ապստամբութեան պարագլուխներու մեծ մասը ձերբակալուած կրլլայ:

Քաղաքիս դէպքի միջոցին պատահաբար վիրաւորած երկու հայերու վիճակը բաւական զոհացուցիչ կերեւի:

Ծանօթ դէպքի առթիւ մերայիններէն 4 հոգի ձերբակալուած էին, երկուքը, այսօր անպարտ ազատուեցան, մնացած երկուքէն մէկը քաղաքէս 2 ժամ հեռաւորութեամբ Խուլթիկ գիւղացի երկաթագործ մը ըլլալով ամբաստանուած է, քիւրդերուն կողմէյ յարմար ձեւերով տապար շինելու համար, իսկ միւսը, որ զօրքէ մը փամփուշա գնելու ամբաստանութեամբ ձերբակալուած է, մեծ յոյս ունենք թէ քիչ ատենէն առաջնոյն հետ պիտի յաջողի ազատել, մեր ձեռք առած օրինական միջոցներու վրայ:

Առ այժմ մեր թեմի մէջ կատարեալ հանդարտութիւն և ապահովութիւն կը տիրէ, Քրդական շարժումը կարելի է մասամբ զսպուած համարել:

Սակայն վերջին եօթնեկիս մէջ Սղերդի Ազգ. առաջնորդարանէն մեզ հասած պաշտօնական գրութիւնները շատ տխուր ներկայացնելով տեղւոյն վիճակը, հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն:

Տարւոյս մարտ 14-ին գիշերը Ղարչանի Ռադուան գիւղէն կէս ժամ հեռու Ճէմսարեալ անուն գիւղին մէջ քիւրդերը Օհան Հէքոյեանի և Մուրատ Գալէեանի տունները մտնելով, հրացանի կոթով և դաւազանով կը խոշտանգեն անեցիները, կը կողոպտեն տնական իրեղէններէ զատ 8 եգ և մէկ աւանակ: Կողոպտուած երկու բնտանիքները մերկ ու բոկոտն յաջորդ առաւօտ ուրիշ գիւղ մը կը գաղթեն:

Մարտ 28-ին երեկոյեան ատենները Սղերդէ 2½ ժամ հեռու Ծոռանըքա քիւրդ գիւղին մօտերը, աւազակ քիւրդերը կը յարձակին Ռադուանի հայ իշապահներու վրայ. որոնցմէ ծանրապէս կը վիրաւորուին Ստեփան և Խաչիկ անուն ազգայինք, իսկ միւսները շարաշար խոշտանգուելէ վերջ կը փախչեն: Չարագործները կը հեռանան վիրաւորները մեռած կարծելով: 3—4 ամիս առաջ Սղերդի Ղարչան գաւառի բնտէն փախած հշանաւոր աւազակ Տէրվիշ՝ որդի

Ջնարհէի մի քանի զինեալ ընկերներով մարտ 29-ի գիշերը Ռնդուանի քիւրդ Միւսիւր (գաւառապետ) Իսլամ պէյի թէլադրութեամբ կը յարձակի Ռնդուանի զլխաւոր ազգայիններէն Ղազարեան ընտանիքի տանը վրայ, զնգակներու տարափով կը սարսափեցնեն անեցիկները, ու չարաչար կը ծեծեն զանոնք, յետոյ Ղազարեան Մարտիրոսի 15 տարեկան նշանուած աղջիկը Սէվէ կառւանդէ, կըսուի թէ անեցիկէն ումանք ալ վիրաւորուած և տունն ու յարակից խանութը կողոպտած են: Ռնդուանի գաւառի Խոմայիլ պէյ սոսկալի թշնամի է եղբը յիշեալ Ղազարեան ընտանիքին, որ համարձակած էր ասկէ առաջ բողոք բառնալու անոր գեղձնարար ընթացքին դէմ:

Խիզանի անրահոչակ Սէիդ-Ալիի հօր եղբայր Շէյխ Մուսի Բանմէ և Լատիֆ անուն երկու որդիները հօբերնուն թելադրութեամբ կարգ մը համախոհ քիւրդ արքանեակներու հետ մարտ 29-ի գիշերը կը յարձակին Հէշէր գիւղի վրայ (Սղերդի վիճակի մէջ) Մարգար անուն հայ երիտասարդը սպանելու չար դիտաւորութեամբ:

Բարեբախտաբար յիշեալ Մարգար այն գիշերը տուն չգտնուէր և չարագործները գոմը մտնելով Մարգարի փոխարէն սուրով ու դաշոյնով կը կոտորեն անոր 50 ոչխարները: Իրաց այս տխուր վիճակին վրայ՝ Հէշէր գիւղի մէջ 4 հայ ընտանիքներ ստիպուած են մօտակայ հայ գիւղերը գաղթել:

Սոյն դիտողութիւնները մեզ հաղորդուելուն պէս, թէ բերանացի և թէ զրաւոր դիմումներով պահանջեցինք ակող-ւոյս կառավարութենէն, որուն ենթակայ է նաև Սղերդի առաջնորդական թեմը, որպէս զի այս ամեն չարագործութեանց վերջ մը գրուելու համար հարկ եղած միջոցները ձեռք առնուեն և մերայնոց վիճակը ապահովուի:

Կառավարական պաշտօնեաներու մասին գալով, նուազ բացառութեամբ ամենքն ալ գէշ տրամադրութեամբ կը վերաբերուին մերայնոց հանդէպ, Պաշտօնեաները մասնաւորապէս Պիթլիսի Կուսակալութեան համար, կեդրոնի Կառավարութիւնը կարծես ընտրանօք կը ղրկէ: Ամենքն ալ հայ-

ատեաց, կրօնամուկ և բառին իսկական առումով տանիկներ են: Բաց աստի, եթէ երբէք պատահամբ լաւ պաշտօնեայ կը զրկուի այս կողմը, հազիւ քանի մը ամիս կը պաշտօնավարէ և ահա անմիջապէս կը փոխադրեն այլուր, անոր փոխանորդ կարգելով հայակեր մէկը: Արդէն պէտք է ըսել որ մեր կառավարութիւնը, որ իսկապէս Շէյխերու քաղաք մըն է, ուր ամբողջ քիւրդ ժողովուրդին համար Շէյխին մէկ հրամանը երկնային պատգամ մըն է, անկարելի բան չկայ բնաւ: Շէյխը հրամայեց, ամեն ինչ վերջացաւ: Այս առթիւ բոլոր եկող պաշտօնեաները ստիպուած են, քիչ ժամանակ վերջ ազդուել միջավայրի այս տիւրը մթնոլորդէն և ահա կուսակալէն սկսեալ մինչև յետին պաշտօնեան իրենց պէտք են և հացէն չզրկուելու համար կսկսին հպատակուել Շէյխին հրամաններուն և այս կերպով սանդարապետի զաւակ եղող այս Շէյխերը իրենց ազդեցութեան տակ առած են ամբողջ կառավարութեան կազմը:

Ահա համառօտակի մեր կառավարութեան պաշտօնէից վիճակը և հոգեբանական դրութիւնը և տրամադրութիւնը մերայնոց հանդէպ, ասկէ կարելի է երևակայել թէ մերայինք ինչ անտանելի կացութեան մէջ կը գտնուին այս շրջանին մէջ և մենք անարժանաբար իբրև կեդրոնի (կուսակալութեան) առաջնորդ սրբան տագնապալի և ցաւալի վայրկեաններ կանցուցանենք, դիմազրուելու և պայքարելու համար թէ կառավարութեան այս աղտոտ պաշտօնէից և թէ միանգամայն շէյխերու գործած չարագործութեանց և անիրաւութեանց՝ մերայնոց հանդէպ:

Քիւրդերը այս դէպքէն վերջ առայժմ Հայոց որ և է փնաս չեն հասուցած:

Բարեկարգութեան համար մինչև ցարդ մեր կառավարութիւնը ո՛ր և է շարժում չէ կատարած, կարծես իւր յաւիտենական քունը վրդովել չուզէր: